ՏԵՂԵԿԱՆՔ

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ և 5-րդ մասերով՝ հետեւյալ խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի 1-ին մասի ~~1-ին~~5-րդ կետով սահմանված ~~անունը~~ անվանումը չի կարող համընկնել, նույնական կամ շփոթելու աստիճան նման լինել այն ~~ընկերության~~ անձի ապրանքային նշանին կամ ֆիրմային անվանմանը ~~հետ~~, ~~իրենց~~ դրանց գովազդներում օգտագործված կամ օգտագործվող գրաֆիկական կամ~~,~~ ձայնային նշաններին ~~նույնական կամ շփոթելու աստիճան նման նշաններին~~, որը վերջին հինգ տարում զբաղվել է շահումով խաղի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղի) կամ վիճակախաղի (տոտալիզատորի) կազմակերպմանչի գործունեությամբ:

5. Եթե հեղինակազորման հայտը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, ապա կարգավորող պետական մարմինը վերադարձնում է հայտը այն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում՝ այն սույն հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու համար: Հեղինակազորման հայտը վերադարձվելուց հետո մեկամսյա ժամկետում այն սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանեցվելու և կրկին չներկայացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը մերժում է հայտը:»:

Հոդված 2. Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր ~~՝~~ 9-րդ կետ.

«9) Հեռարձակողի տեսալսողական ծրագրի անվանումը չի համապատասխանում սույն օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին:»:

Հոդված ~~2~~3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկմանը հաջորդող տասներորդ օրը~~ եւ տարածվում է մինչեւ ուժի մեջ մտնելը առաջացած իրավահարաբերությունների վրա~~:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը հեղինակազորված Հեռարձակողի տեսալսողական ծրագրի անվանումը պետք է համապատասխանեցվի սույն օրենքով սահմանված պահանջներին սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում: Սույն մասի պահանջները չկատարվելու դեպքում կարգավորող պետական մարմինը հեղինակազորված Հեռարձակողի նկատմամբ կիրառում է Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը:

3. Եթե մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կարգավորող պետական մարմին է ներկայացվել հեղինակազորման հայտ, որը սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին դեռևս չի ընդունվել, և որը չի համապատասխանում սույն օրենքով սահմանված պահանջներին, ապա կարգավորող պետական մարմինը վերադարձնում է հայտը այն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում՝ այն սույն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն հեղինակազորման հայտը վերադարձվելուց հետո –մեկամսյա ժամկետում այն սույն օրենքի պահանջներին չհամապատասխանեցվելու և կրկին չներկայացվելու դեպքում, կարգավորող պետական մարմինը մերժում է հայտը: